

# Ա Ր Փ Ի "



**ՀԱՅՈՅ ՏՅԱՌԵՐԻ ԳՈՂԱՓԱՐՈՂՆԵՐ**



Ս. Մահմակ



Ս. Մեսրոպ

**ՀԱՅ ՏՊԱԳՐԻ ԶՆԵՐ**



Արքայ դպիր




Սուլթանան

ԱԲԳԱՐ ԴՊԻՐ. — Հայ տպագրիչ, ծն. Տաճկաստանի եւզոկիա ք. ԺԶ. դարու առաջին քառորդում։ Փորբուց ուսաւ իր քաղաքի մօտ եղած վանքերում։ 1562-ի հայոց Միքայէլ Սերաստացի կաթուղիկոսը գնալով իր հայրենիքը, ծանօթացաւ Արքարի հետ և տեսնելով, որ նա ցանկութիւն ունի տպագրութեան զործը սովորելու, նրան մի վկայական տուեց և խորհուրդ տուեց Եւրոպա գնալ։ Արքարն իր Սուլթանշահ որդու և ուն Աղէքանդը քահանայի հետ անցաւ Եւրոպա և դիմեց զէպի Հռոմ, ուր ներկայանալով Պիոս VI պապին, նրա առաջարկի համաձայն կազմեց Հայաստանեաց Առա-

քելական եկեղեցու գաւանութեան և պատարագի մասին մի գրութիւն, որ մնացել է լատին լեզուով: Արգարն այստեղ հայերէն գրեր ձուլել տալով վենետիկ գնաց, ուր այդ ժամանակ հայ մետաքսավաճառներ և գոհարավաճառներ կային և սեպհական մատուռ էլ ունէին: Ծանօթանալով այդ վաճառականների հետ, նրանց օժանդակութեամբ 1565-ին տպեց «Սաղմոս» (Մեկնիչ Սաղմոսաց) \*), Դրգարը 1567-ին անցաւ կ. Պոլիս, ուր Առաքել վարդապետ Վիրապեցու ընկերակցութեամբ ո. Նիկողայոս եկեղեցու մօմ մի տպարան հաստատեց և շարունակեց հոգեոր բովանդակութեամբ գրքերի տպագրութիւնը, ինչպէս Փոքր թերականութիւն կամ Այրքենարան 1567, Տօնացոյց 1568, Տաղարան 1568, Ժամագիրը 1568, Պատարագատետը 1568 (1569 էլ են գրում): Արգարին են վերագրում նաև Յիսուս Որդի 1565 Վենետիկում տպուած և Մաշտոց 1569 կ. Պոլուում: Մահուան թուեկանն անյայտ, հաւանականարար մեռած կ. Պոլուում և գուցէ 1569-ին կամ յաջորդ տարին, որովհետեւ 1569-ից նրան մասին այլ ևս յիշաւակութիւն չենք գտնում:

«Բառարան հայ կինս».



Միսիրար



Համիլի Արամեան



Կ. Վ. Շահնազարեան

## ԼԵԶՈՒԻ ՀԱՅՑՐԵՐ



Արքեն Վ. Բագրատունի



Խաչատուր Օբովիեան



Արքեն Վ. Այսրնեան

\*) Հայկական տպագրութեան սկիզբը ոմանք սխալմամբ հաշուում են այս թուականից, ըստ Ա. Այվաղեանի «Տար հայ կենսագրութեանց» գրի 1452 թ. է սկսուել և առաջին տպագիր գիրքն եղել է Պարզատումնար գիրքը. ըստ Կապետի 1512—1513 թ. (տես «Բանասէր» 1903 թ. 6—7 էջ 203): Ես տեսել եմ հանդուցեալ Ստեփանոս Տէր-Ստեփանոսեանի գրագրանում մի գիրք տպուած 148° (չեմ յիշում, միայն 5 էր կամ 6-ը), որի մէջ ո. Գրքից հատուածներ են տպուած քանի մի լեզուով և ի թիւս այլոց նաև հայերէն երկաթագիր տպերով սաղմոսից մի հատուած: Եթէ չեմ սխալում այս գիրքը տպուած է Մարտէյլ քաղաքում: Մը հիման վրայ գոնէ ես դըժուարանում եմ հաւատալ, որ մենք գեռ 1485-ից էլ վաղ տպագրութիւն չենք ունեցել:



Մանուկ Աբեղեան



Ստեփանոս Պալատանեան



Մատարիս Գևագաս

ամենահզօր յիշարանն է:

Կեանքի պահանջները ստեղծեցին եկեղեցի, իսկ եկեղեցին էլ գիրը և այսօրուայ մեր ինքնուրոյն գոյութիւնը այսպէս թէ այնպէս պարտական ենք կրօնին և լեզուին:

Վռամշապուհի արքունիքը հոգեոր և աշխարհական ազգացաւ մարդկանց մի ժողով պէտք է համարել, որտեղ մի կողմ կանգնած են Ս. Սահակ հայրապետը՝ մի մեծ հայրենասէր և խնամատար, Ս. Մեսրոպ Մաշտոց, որ Տարօնի Հացեկաց գիւղում ծնուեց, նախ զինուորական եղաւ, ապա իրքի արքունի քարտուղար ծառայեց և յունական ու ասորական փիլիսոփայութիւնն ուսումնասիրելով հազաւ հոգեորականի սքեմը և իր կեանքը նուիրեց հայ գրին ու նախագաղափարեց հայոց այբուբենը, իսկ միւս կողմը կանգնած էր Վռամշապուհ թագաւորն իր պալատականներով:

Խաղաղասէր թագաւորը հաւանեց Ս. Սահակի և Մեսրոպի ձգտումները և ինքն էլ օգնեց նրանց, մինչև որ

Դիր սիրէ, դալամ սիրէ, դաւրաց սիրէ:  
Սայեար-Նովա

## ԱԶԳԱՅԻՆ ՏՕՆԸ

404—1913

Սրանից 1500 տարի առաջ, երբ մեր ազգային կեանքը արմատացած էր սեփական հայրենիքում, երբ հայոց գահի վրայ նստած էր Վռամշապուհ թագաւորը, մի նոր լոյս ծագեց հայոց աշխարհին և ստեղծուեց այն փրը, որը մեր կեանքի և գոյութեան

**404—406** թուականներին հայոց այլութէնն արդէն պատրաստ էր, երկիրը լցնւեց գլուխոցներով և պատրաստուեցն աշակերտներ, որոնք գնացին Յունաստան կատարելագործելու իրենց ուսումը և վերադառնալով հայրենիք գրականութիւն ստեղծեցին, թարգմանեցին և Գիրքը, զրեցին աղքային պատմութիւն, աղանդների ու եկեղեցու պատմութիւնը, որով այսօր մենք իմանում ենք մեր անցեալը. աշակերտներից նշանաւորներն էին պատմաբաններ Մովսէս Խորենացին, Ղա-

զար Փարպեցին, Եղիշէ, Կորիւն, իմաստասէրներ Եղնիկ Կողբացի և Դաւիթ անյաղթ Փիլիսոփան, Վարդանոսնց պատերազմի հերոսներ Յովսէփ կաթողիկոսն ու Ղեոնիք երէցը և շատ ուժը շնչներ:

Այսօր մենք այս մարդկանց տօննենք տօնում և նրանց անմահ արտադրութիւնների տօնը:

Այս տօնը պէտք է միշտ կենդանի մնայ մեր մէջ և թող օրհնուի մեզ լեզու տուողների յիշատակը:



### Լ Ե Զ Ո Ւ Մ Շ Ա Կ Ո Ղ Ն Ե Բ



Թաֆֆի



Հ. Գ. Ալիքանի



Ս. Պոօօկեանի

### ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ

Վերջին տարիներս մի պայքար է ստեղծուել գրական աշխարհում՝ հայ գիտակից հասարակութեան կողմից ուղղագրութեան հարցի շուրջը, որոնք տարացած վիճում են, զրախօսում, ձառարանում թէ պէտք է թողնել հինը և ոլանալ դէպի նորը, նորը...

Շատ լաւ:

Բայց տեսնենք թէ այդ մարդիկ ինչպէս են նորը սլանում:

Զանազան մարդիկ, յայտնիներից սկսած մինչև անյայտները իրենց քմահաճոյըներին

ենթակայ, հայ գիրը զարձրած իրենց ձեռքին մի խաղալիք, զրում են այնպէս, ինչպէս իրենց սիրտն է ցանկանում, ոչ մէկը միւսին ենթակայ:

Զանազան մարդիկ, զանազան ուղղութիւններ:


Եւ այսպէս անընդհատ: Ի՞նչ անի հայ ժողովուրդը, որին լսէ: Ի՞նչ անեն նրանք, որոնք կարդալով և սովորելով ըստ կանոնի, ձեռքներն ու աչքները սովորեցրել են նրան, և որոնց թիւն անհամար է... նորից աշակերտեն այդ նոր ուղղութեանը:

Ծիծաղելի՛ է:

Միթէ լաւ չի լինի շարունակեն ի-  
րենց կանոնաւոր ընթացքը, ընդու-  
նուած ուղղագրութեամբ սովորեն ու գրեն,  
և ռուանց արգելումների կարող են սլանալ  
դարձեալ նոր աշխարհ, նոր գրականու-  
թիւն...

Եւ լաւ կանեն մեր ազգային նոր ուղ-  
ղագրութեան հեղինակները, եթէ հան-  
գիստ թողնեն հայ յիշաչարչար տառերն  
հանդերձ, և հանդիսաւ մեր շփոթուած ամ-  
րոխին:

Un Mousseou



## Խ Մ Բ Ա Գ Ի Ր Ն Ե Ր



Յակոբ Կարիմեան «Կովկաս»:

## ՀԱՅ ՏԱՐԵՐՈՒ ԼԵԶՈՒՆ

Երբ զեփիւուը օրօր կ'երգէ ծառերուն,  
Համբոյր տալով տերևներուն քաղցրանուշ,  
Երբ առուակը հրաժեշտ կուտայ սարերուն,  
Եւ կը պատմէ լիճին անվերջ անցհալ յուշ,

Երբ ալեակը ողբերգ կ'երգէ աւազին,  
Որ ըզզածուած կը յայտնէ իր մրմունջը,  
Երբ սոխակը իր գարաւոր երազին՝  
Սիրած վարդին կը դրէ իր տրտունջը,

Երբ ծաղիկներ աղօթք կընեն Արարչին,  
Խունկ կը ծըխեն, բոյր կը ծորեն սրտայոյդ,  
Եւ երբ ասաղեր երբ այզին մէջ կը թագչին,  
Եւ կը խնդրեն դեռ ապրելու քիչ մը յոյս,

Անոնց լեզուն լեզուն է հայ տառերուն,  
Օ՛չ, համբուրեմ քաղցըր տառեր հայերուն:

\* \*

Երբ կոհակը անդունդներէն դուրս ժայթքած,  
Եւ զայրացած ժայռին կուտայ իր շառաչ,  
Երբ վայրենի քամին հըրէշ, սկը, կատղած,  
Կը մըռնչէ անտառին որ տայ հառաչ:



Խորիմեան Հայրիկ «Արծուի Վասպուրական»

Երբ կը բազմին ահեղ ամպեր իրարու,  
Եւ ցասումով և զայրոյթով կը գոռան,  
Երբ կը պատմէ կայծակն երկինքն ահարկու  
Շանթէ լեզուով որոնք հուրով մեզ կ'ոռնան,


Երբ Վէստեաններ պատգամ կուտան  
Պարէղար,

Յիշեցնելու իշխանութիւն և փառք հին,  
Երբ կը վրէժ իրաւունքը սուրբ, արդար  
Երբ կը գոռայ պաշտպան կոմպնած խեղճ  
զոհին,


Անոնց լեզուն լեզուն է հայ տառերուն,  
Օ՛չ, պաշտեմ ես հըզօր տառեր հայերուն:  
Թ. Գառնիլի

(Քաղցւած «Մասիս երկնքէն բարձր» զրքից)





Անդրանիկ մ. ֆ. Մանդիմեն  
«Արարատ», «Գարուն», «Մեղու  
Հայաստանի»:



Պետրոս Արմենի Արմեն Հայաստանի»



Մաքրել Մաքրելին  
«Արևելիան Մամուլ»



Սպանդարյան Սպանդարյան «Նոր-Դար»



Գրիգոր Արծրունի «Մշակ»

### ՀԱՅՈՅ ՀԱՐՑՈՅ

Խօնդօնից «Рус. Сл.»-ի թղթակիցը հեռազբում է.

«Անգլիական դիւնագիտական շըրջանակը Սագօնովի Պարիզ և Բերլին այցելում է»

լելու առիթով հետևեալն են յայտնում ի միջի այլոց:


«Գիտակցելով, որ Հայաստանի քառային դրութիւնը վաղ թէ ուշ յարուցանելու է Ռուսաստանի միջամտութիւնը և կարող կը լինի ստեղծել միջազգային բարդութիւններ, ուուսաց զիւանագիտութիւնը պայման է գնում Բ. Դրան առաջ, որ Ռուսաստանը կը համաձայնէ Թիւրքիայում մաքսային տուրքերը աւելացնելուն, եթէ միայն հայկական երկու վիլայէթներում սահմանուի ընտրեալ վարչութիւն մեծ պետութիւնների հսկողութեան ներքոյ:

«Պարիզում զո՞նուած միջոցին Սալոնովը ստացել է Ֆրանսիայի համաձայնութիւնը՝ պաշտպանել Թիւրքիայի համաձայնութիւնը՝ սովորութիւնների հսկողութեան ներքոյ:

պահանջի:

«Ենչ վերաբերում է Գիրմանիային, նա տուել է համաձայնութիւն բաւական անուրոշ, խուսափողական ձևով։ Հարաւոր է, որ Սագոնօվի և Բէտման-Հօրինի բանակցութիւնները անձամբ հարցի լուծումը յանդեցնեն որոշ համաձայնութեան»։

«Ռուս զիազրմատիան մշակել է բարենորոգւթեան հայոց վիլայէթների համար, որ և ներկայացուած է Կ. Պոլսի զեսպանին։ Համաձայն այդ ծրագրի պէտք է կազմուեր հայկական մի նահանգ, որ պէտք է կառավարուեր գեներալ - նահանգապետով, որին նշանակում է Թիւրքիան, մեծ պետութիւնների հետ համաձայնութեան դալով»։



Աղքանդր Նեիցեան «Վաճառական»



Արքակ Զօսյանեան «Անահիտ»



Միքայիլ Բարխուդարեան  
«Հանդէս Դրականական»



Յարուբին Տեսկեան «Հայաստան»

## Լ Ո Ւ Բ Ե Ր

«Յ Ա մ ս յ ս Ա -ին, երեկոյեան 5 ժամին իջմածնում սկսուեց տօնախմբութիւնը, ներկայ են բազմաթիւ պատգամաւորու-